ԾՐԱԳԻՐ

«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ» ԹԵՄԱՅՈՎ 2-ՇԱԲԱԹՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023թ.-ից (կրկնողաբար) ք. Երևան (ՀՀ ԱՆ ԱԱԻ «Ստոմատոլոգիայի» ամբիոն)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»

Շաբաթ 1		
Օր 1		
10:00-12:00	**Դասախոսություն** Արհեստական շապիկների դասակարգում: Ատամների հղկման առանձնահատկությունները: Մետաղ-կերամիկական, կերամիկական շապիկներ: Հղկման և ֆիքսացիայի առանձնահատկությունները, կլինիկա-լաբորատոր փուլերը	Գայանե Նարիմանյան
12:00-14:00	**Գործնական աշխատանք** Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամակակակից եղանակներով	Գայանե Նարիմանյան
Օր 2		
10:00-12:00	**Դասախոսություն** Ֆրոնտալ ատամների աղգեզիվ վերականգնում: Ներդիրներ, վինիրներ, ծայրատային գամիկավոր կոնստրուկցիաներ փուլերի քննարկում	Մեսրոպ Մեսրոպյան
12:00-14:00	**Գործնական աշխատանք** Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների արմատախողովակների մշակում և պատրաստում գամիկներով ատամնաշապիկների համար ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամակակակից եղանակներով միկրոպրոթեզների պատրաստման համար: Ռեֆրակտորներ (լյումիներներ, ուլտրանիրների) կիրառման քննարկում CAD/CAM1 տեխնոլոգիայով պսակների ներդիրների գամիկների վինիրների պատրաստման փուլերի քննարկում	Մեսրոպ Մեսրոպյան
Օր 3		
10:00-12:00	**Դասախոսություն** Կարիեսային ախտահարումներ ախտորոշման, բուժման ժամանակակից սկզբունքները, ախտորոշման և բուժման սխալները և բարդությունները	Մարինա Դանիելյան
12:00-13:00	**Գործնական աշխատանք** Ատամների վերականգնումը ժամանակակից պլոմբանյութերով: Կարիոզ խոռոչի հղկման առանձնահատկությունները կապված վերականգնման տեսակի հետ: Ֆանտոմ ատամների վրա, անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ,	Մարինա Դանիելյան

	կատարել կարծր հյուսվածքների մշակում, խոռոչների ձևավորում կապված վերականգնման տեսակի հետ: Կարիոզ խոռոչի ձևավորում ըստ դասերի (C ֆակտոր): Քննարկել կարիոզ խոռոչում դեղորայքային մշակման ժամանակակից նյութերը (Consepsis): Քննարկել և ցուցադրել ադհեզիվ ձևավորման առանձնահատկությունները: Ցուցադրել էսթետիկ վերականգնման համար նախատեսված գչիրների և աբռազիվ գործիքների հավաքածուն և դրանց օգտագործման տեխնիկան էսթետիկ վերականգնման յուրաքանչյուր փուլում: Ռետենցիոն սարքերի պարապուլպար պիների օգտագործման առանձնահատկությունների քննարկում էսթետիկ պլոմբավորման ժամանակ (Պիների ֆիքսացիա): էսթետիկ պլոմբավորման ժամանակ Masking Agent –ի, 3M ESPF-ի օգտագործման եղանակների, ռեստավրացիոն համակարգի, 3M ESPF-ի նյութերի և դրանց կիրառման ոլորտի քննարկումը: Ատամների կարիոզ խոռոչների վերականգնման սենդվիչ-տեխնիկայի (փակ և բաց սենդվիչ) կիրառման ցուցումների և փուլերի քննարկում:	
Օր 4		
10:00-12:00	**Դասախոսություն** Միջդիսցիպլինար համագործակցություն: Կողմնային կտրիչների ադենտիա	Հայկ Սարգսյան
12:00-14:00	**Գործնական աշխատանք** Միջդիսցիպլինար համագործակցություն: Ուղղահայաց հարթության մեջ տեղի վերականգնում օրթոդոնտիկ ճանապարհով	Հայկ Սարգսյան
Օր 5		
10:00-12:00	**Դասախոսություն** Կարիեսային ախտահարումներ: Ախտորոշում, բուժման ժամանակակից սկզբունքներ, ախտորոշման և բուժման սխալներն ու բարդությունները մանկական ստոմատոլոգիայում	Անահիտ Մկրտչյան
12.00-14:00	**Գործնական աշխատանք** Քննարկել կարիոզ խոռոչի հղկման առանձնահատկությունները երեխաների մոտ, պլոմբանյութի ընտրությունը: ART-եղանակի կիրառումը մանկական ստոմատոլոգիայում: Ապակե իոնոմերային ցեմենտների և կոմպոմերների օգտագործման ցուցումների քննարկում մանկական ստոմատոլոգիայում:	Անահիտ Մկրտչյան
Շաբաթ 2		
Օր 1		
10:00-12:00	**Դասախոսություն** Մասնակի անատամության դասակարգումը: Մասնակի թիթեղային պրոթեզներ: Պրոթեզների	Գայանե Նարիմանյան

	ժամանակակից տեսակները, կլինիկա-լաբորատոր փուլերը: Աղեղային պրոթեզավորում, դիզայն, ֆիքսացիայի տեսակները, կլինկա-լաբորատոր փուլերը	
12:00-14:00	**Գործնական աշխատանք** Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամակակակից եղանակներով: Մասնակի շարժական պրոթեզների ժամանակակից ձևերի (նեյլոնային, ակրիլային, Acry Free, կվադրոտի, սենդվիչ-պրոթեզների) կիրառման ցուցումների, հակացուցումների, առավելությունների և թերությունների քննարկում	Գայանե Նարիմանյան
Օր 2		
10:00-12:00	**Դասախոսություն** Լրիվ անատամություն: Լրիվ շարժական պրոթեզների պատրաստումը 5 այցով: Կլինիկա-լաբորատոր փուլերը	Գայանե Նարիմանյան
12:00-14:00	**Դասախոսություն** Պատասխանատու դասախոսի անմիջական հսկողությամբ ստանալ ֆունկցիոնալ դրոշմներ անատամ ծնոտների պրոթեզավորման համար: Ակրիլային պրոթեզների կիրառման ցուցումների, հակացուցումների քննարկում, կլինիկական դեպքերի վերլուծություն	Գայանե Նարիմանյան
Օր 3		
10:00-12:00	**Դասախոսություն** Կամրջաձև պրոթեզներ, հղկման առանձնահատկությունները: Ցուցումներ և հակացուցումներ	Գայանե Նարիմանյան
12:00-13:00	**Գործնական աշխատանք** Կամրջաձև պրոթեզների հենակետային ատամների ընտրությունը և հղկման սկզբունքները: Կլինիկական դեպքերի քննարկում թեմայի վերաբերյալ	Գայանե Նարիմանյան
Օր 4		
10:00-12:00	**Դասախոսություն** Բերանի խոռոչի վիրաբուժություն: Օստեոպլաստիկա, ալվեոլոպլաստիկա, ֆրենէկտոմիա	Արսեն Մանուկյան
12:00-13:00	**Դասախոսություն** Ատամների ախտաբանական մաշվածություն. դասակարգումը, բուժման մեթոդները: Ատամների շինավորում	Գայանե Նարիմանյան
13:00-14:00	**Գործնական աշխատանք** Սլայդների օգնությամբ տարբեր կլինիկական դեպքերի և բուժման եղանակների քննարկում	Գայանե Նարիմանյան
Օր 5		
10:00-12:00	**Դասախոսություն**	Մեսրոպ Մեսրոպյան

	Ստոմատոլագիայում կիրառվող դեղամիջոցները: Ասեպտիկան և անտիսեպտիկան ստոմատոլոգիայում	
12:00-14:00	**Գործնական աշխատանք** Իրազեկել ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին անձնական, անհատական և աշխատանքային հիգիենայի կանոնների պահպանման և պանաջների վերաբերյալ՝ համաձայն ՀՀ-ում գործող համապատասխան օրենքների: Ներկայացնել ախտահանման ժամանակակից սարքավորումները, եղանակները և նյութերը	Մեսրոպ Մեսրոպյան

Թիրախային լսարան՝ ընդհանուր (ընտանեկան) ստոմատոլոգներ,օրթոպեդ–ստոմատոլոգներ,թերապևտ–ստոմատոլոգներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-30 հոգի: